

ԱԶՍ ԲՈՁՈՑԱՆ

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՐԵՎԵԼԶԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԱՏՍՈՒԹՅԱՆԸ
ԵՎ ԾԵՍԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՍԻՆՈՐ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՈՒՐԱՆ**

Kleines Lexikon des Christlichen Orients, 2. Auflage des Kleinen Wörterbuches des Christlichen Orients / Herausgegeben von Hubert Kaufhold, Harrassowitz Verlag, Wiesbaden, 2007, XLV+655 S.

Քրիստոնյա Արևելքի համառոտ բառարան, «Քրիստոնյա Արևելքի համառոտ բառգիրք»-ի Բ հրատարակություն, աշխատասիրությամբ Հուբերտ Կաուֆհոլդի, Հառասովիչ հրատարակչատուն, Վիսբադեն, 2007, ԽԵ+655 էջ:

Քրիստոնյա Արևելքի եկեղեցիների պատմությունը, մկրապետական համակարգերը, վարդապետությունը, ծեսը, լեզուներն ու մատենագրությունները մի քանի հարյուրամյակ շարունակ գիտական հետաքրքրությունների առարկա են Եվրոպայի և աշխարհի կարևորագույն գիտական կենտրոններում: Գիտական հետաքրքրությունից զատ խնդիրն ունի մակ գործնական նշանակություն, քանի որ խնդրո առարկա եկեղեցիները այսօր ևս իրենց ուրույն տեղն ունեն աշխարհի քրիստոնեական եկեղեցիների համակարգում: Գրքում լայնորեն լուսաբանված են Հայոց Առաքելական, Ասորի Ուղղափառ (հակոբիկ և Հնդիկ մալաբար), Ղպտի, Մերձավոր Արևելքի Եթովպական, Ասորի Արևելյան (քաղղեական), Մարոնի, Մելիտ և վրաց եկեղեցիների մկրապետական համակարգին, վարդապետությանը և ծիսակարգին վերաբերող բազմազան խնդիրներ:

Գրախոսվող բառարանը 1975 թ. նույն հրատարակչատանը տպագրված «Kleines Wörterbuch des Christlichen Orients / herausgegeben von Julius Aßfalg in Verbindung mit Paul Krüger» բառգրքի լրացված և մշակված վերահրատարակությունն է: Գիրքն ունի բովանդակության ցանկ, սկսվում է առաջին հրատարակության՝ Յուլիուս Ասֆալգի առաջաբանով, որին հաջորդում է Հուբերտ Կաուֆհոլդի գրած ներկա հրատարակության նախաբանը, բառարանի հոդվածները հեղինակած հետազոտողների և օգտագործված համառոտագրությունների ցանկերը, արևելաքրիստոնեական մատենագրությունների այբուբեններն ու դրանց տառադարձումը, խնդրին վերաբերող հիմնական նորագույն գրականության մատենագիտությունը, բառարանը (էջ 1-539), Քրիստոնյա Արևելքի եկեղեցիների պատմության ժամանակագրական տախտակները,

գրքի եզրերի և անունների ցանկը, արևելաքրիստոնեական եկեղեցիների նվիրապետական աթոռների (վանքերի և եկեղեցիների նշումներով) քարտեզներն իրենց բացատրություններով:

Քառարանը հիմնական մասով հեցված լինելով նախորդ հրատարակության վրա. ներկա տպագրությամբ ներկայացնում է մի նոր, վերաշարադրված և լրացված հրատարակություն, որի հոդվածներն հեղինակել են Արևելաքրիստոնեական եկեղեցիների պատմության և մշակույթի մեթոդյալավագույն գերմանագիր հետազոտողները. Անդրյու Պալմերը, Անդրեա Շմիդտը, Ադել Թեոդոր Խուրին, Դեալեֆ Սյուլերը(†), Դորոթեա Վելտեկեն, Էռնստ Համերշմիդտը (†), Ֆրանց Թինենֆելդը, Գեորգ Գյունտեր Բլումը, Գաբրիելե Վինկլերը, Հուբերտ Կաուֆհոլդը, Հանս-Սիբայել Հաուսիզը, Հառալդ Ջուերմանը, Յուլիուս Ասֆալդը(†), Յոհանես Մադելը, Յոզեֆ Ռիստը, Կառլ Պինգերան, Կուրտ Ռուդոլֆը, Կամալ Մաբրի Կուտան, Կլաուս Վեսելը (†), Լուիզե Աբրամովսկին, Սանֆրեդ Կռայը, Մարսել Ռեստլը, Պետեր Բրունսը, Պյոտր Շուցը, Շտեֆան Վեմիգերը, Թոմաս Վեբերը, Ուրիկե Նիխտեն, Վինֆրիդ Կրամերը, Վոլֆգանգ Հագեն, Վեռներ Ջուերմանը, Վալտեր Սյուլերը: Քառահոդվածների գրքե 90 տոկոսը նախորդ հրատարակության համեմատությամբ ընթերցողին է մատուցվում բոլորովին նոր մոտեցումներով և մեկնաբանությամբ:

Քազմաթիվ հին բառարանային հոդվածներ հարստացվել են նորագույն գրականության հղումներով կամ վերստին գրվել են նորոյա հեղինակների կողմից: Այդ տեսանկյունից կարելի է կարևորել բառարանում տեղ գրված Աբդիշ բար Բրիկա, Ամիդ, Ասսեմանի, Ասորական մատենագրություն, Ասորահոռմեական դատաստանագիրք, Արևելյան մարդաբանություն (Քրիստոսաբանություն), Դատաստանագրքեր, Դիդասկալիա, Եթովպական արվեստ, Եկեղեցական երաժշտություն, Եկեղեցական իրավունք, Երաժշտությունը Քրիստոնյա Արևելքում, Եփրեմ Ասորի, Թովմայի գրքեր, Կաթողիկոս, Կոստանդնուպոլիս, Գալտական ձեռագրեր, Սխիթար Մեքաստացի, Սխիթարյաններ, Ներսես Շնորհալի, Նուբիացիներ, Նուբիական արվեստ, Պաղեստին, Ռաբուլաս Եղեսացի, Վախճանաբանություն, Քարոզ, Քրիստոսաբանություն, և այլ բառահոդվածները, ուր բերված են տվյալ հեղինակին կամ խնդրին վերաբերող վերջին տարիներում հրապարակված կարևորագույն հետազոտությունների մատենագիտությունը, նորովի մեկնաբանությամբ:

Սի շարք բառահոդվածներ չեն ընդգրկվել նոր բառարանում: Օրինակ Աբբասյաններ հոդվածի նյութը վերապատմվում է Հայաստան, Բաղդադ, Պատկերամարտություն, Իսլամը և Արևելյան քրիստոնեությունը բառահոդվածներում: Հիշատակ (Anamnese) հոդվածի նյութը բերվում է Արևելյան Շես հոդվածում: Ե Տիեզերական ժողովին վերաբերող Երեք գլովների հակաճառություն հոդվածի նյութը տրվում է Բյուզանդիան և Քրիստոնյա Արևելքը, Քրիստոսաբանություն, Թեոդորոս Մոպսուեստացի բառահոդվածներում: Վերակոչում (Epiklese) եզրի բացատրությունը միախառնվել է Արևելյան ծես հոդվածին: Gebra hemamat եզրի նյութը վերաշարադրված է

Եթովպական գրականություն, Ծիսական գրքեր և Մալամա Աբբա հոգվածներում: Հակոբիկ եկեղեցի հոգվածը վերաշարադրված է Արևմտաասորկոն եկեղեցի բառահոգվածում, Եկեղեցական տոմար (Kirchenjahr) հասկացությունը՝ ծիսական գրքերին վերաբերող բառահոգվածներում, Liber Graduum-ը՝ ասորական եկեղեցու ծեսին և դավանաբանությանը վերաբերող բառահոգվածներում, Սծղնեականները՝ Մարիամ, Հոգեղենություն (Spiritualität) բառահոգվածներում, Պատարագամատույցը (Meßliturgie)՝ Ծես (Riten) բառահոգվածում, Պատկեր (Bilder)-ը՝ Պատկերամարտություն, Խալամ բառահոգվածներում: Վանականություն հասկացությունը քննված է Քրիստոնյա Արևելքի տարբեր եկեղեցիներին վերաբերող բառահոգվածներում, Նեստորական եկեղեցի մախկին բառահոգվածի անվանումը վտխարինված է Արևելյան Ասորիներ եզրով: Օրդեններ և կարգեր բառահոգվածի մյուսը ցրված է Արևելքի լատին եկեղեցի, Մարոնի եկեղեցի և այլ բառահոգվածներում: Սրբություն (Sakramente) եզրի բացատրությունը ծուլվել է Ծես (Riten) հոգվածին, Հոգեկանությունը (Seelenschlaf)՝ Վախճանաբանությանը, Ժամակարգությունը (Stundengebet-Offizium)՝ Ծիսական գրքերին: Սուրբ սեղան (Tabot) եթովպական եզրը բացատրվում է Եթովպական արվեստ և Ծիսական իրեր բառահոգվածներում: Հավանաբար նոր խմբագրական խորհուրդը նկատի է ունեցել այն համգամանքը, որ վերևում թվարկված բառահոգվածները գրքում մեկնաբանված են զանազան աղիքներով և կարիք չունեն առանձին բացատրության ու մեկնաբանության՝ առանձին բառահոգվածի:

Նախորդ հրատարակության որոշ բառահոգվածներ և տերմիններ դիտվել են ոչ տեղին և դուրս են բերվել բառարանից, թեպետ դրանցից շատերը հաճախ հիշատակվում են բառարանի տարբեր մասերում (օր. Խաբկանք [Apatheia], Ասկետիկ, Անտոն Ա, Գաղութներ, Աբրահամ Էլքելենացի, Էջմիածին, Եվագրիոս Պոնտացի, Եվտիմես, Եզնիկ Կողբացի, Ֆիլոքսեն, Վրաց վանականություն, Խառան, Սրբացում [Heiligenverehrung], Հենոտիկոն, Խաահակ Անտիոքացի, Եսայաս, Հակոբ Բարադես, Հովհաննես Ապամեացի, Հուստինիանոս Ա, Լազարո, Թաղման կարգ [Mashafa genzat], Շննդյան կարգ [Mashafa milad], Կանքեղի կարգ [Mashafa qandil], Նիկիա, Շմիդտ Կ., Սիմեոն Սիջագետքցի, Տակլա Հայմանոտ, Թամա լիճ, Թիմուր Լենգ, Երրորդություն [Tritheismus], Օմայաններ, Վաղարշապատ, Վանա լիճ և այլն):

Նախկին հրատարակության համեմատությամբ ավելացվել են նոր բառահոգվածներ (օր. Հալեպ, Ալեքսանդրի վեպ, Ալեքսանդրիա, Ամխարերեն [մախկին հրատարակության Եթովպերենի փոխարեն], Ամխարերեն գրականություն, Անի, Ապոկրիֆներ, Հայրաբանություն [Apophthegmata patrum], Առաքելական ավանդույթ [Apostolische Überlieferung], Քրիստոնյա արաբական մատենագրություն [Arabisch-christliche Literatur], Հայ-կաթոլիկ վանականություն, Ասորիներ [քրիստոնյա], Արևելքի ասորական եկեղեցին, Կաթոլիկ-եթովպական վանականություն, Բաղդադ, Բարադան և Յովասափ [Barlaam und Josaphat], Սորուքը և մագալին ծածկույ-

քը հոգևորականների [Bart und Haartracht der Kleriker], Կաթոլիկ միություն [Catholica Union], Քաղղեական եկեղեցի [Chaldäische Kirche], Քաղղեական վանականություն, Քորեպիսկոպոս, Քրիստոնյա-պաղեստինյան լեզու և մատենագրություն, Սարկավագ, Սարկավագուհի, Պոեզիա [Dichtung], Եկեղեցագիտություն [Ekklesiologie], Էրիթրիա [Eritrea], Արքեպիսկոպոս [Erzbischof], Գալավդեվոս կայսր, Գուդի Իգնացիո, Հոմս. Պատկերամարտություն [Ikonizität], Իրան, Իրաք, Իսլամը և արևելյան քրիստոնեությունը, Իսրայել, Հորդանան, Հրեություն, Ղպտի կաթոլիկ վանականություն, Լատին եկեղեցին Արևելքում, Լիբանան, Մալուլա [գյուղ 55 կմ Դամասկոսից հյուսիս], Մարդին, Բժշկագիտություն դպտական, Մտավոր պատմություն Քրիստոնյա Արևելքի [Mentalitätsgeschichte des Christi. Orients], Մետրոպոլիտ, Մեռոն, Լեռնային Ղարաբաղ, Նագրան, Նոր արամեերեն, Նորիական գրականություն, Դրամագիտություն, Օդաներ Սողոմոնի [Oden Salomos], Պահլավերեն, Պապիրուսագիտություն, Անձնական կարգավիճակ [Personalstatut], Ֆիզիոլոգոս [Physiologos], Պրո Օրիենտե, Մես-արևելյան [Riten-orientalische], Մասանյաններ, Սողդայական գրականություն, Սոկոտրա [Soqotra], Հոգեկանություն [Spiritualität], Ասորիներ, Ասորական վանքեր, Ասորի-կաթոլիկ վանականություն, Ասորի-ուղղափառ եկեղեցի, Ասորի-Մալաբար եկեղեցու վանական կարգեր [Syro-malabarische Orden und Kongregationen], Ասորի-մալանքար վանականություն, Տիսերան Օծեն, Թուրքիա, Քահանայի ամուսնություն [Zölibat], Ջրադաշտականություն [Zoroastrismus], Կիպրոս և այլն): Բերված բառահոդվածների վերնագրերից իսկ ելնելով կարելի է հավաստել, որ կատարվել է լայնածավալ մի աշխատանք և հեղինակներն իրենց հնարավորությունների սահմաններում փորձել են հարստացնել բառարանի պարունակությունը:

Բառարանի վերջում բերվում են Արևելաքրիստոնեական եկեղեցիների պատմության նորացված ժամանակագրական տախտակները, անվանացանկերը, քարտեզները: Բառարանից օգտվողին կարող է անգնահատելի ծառայություն մատուցել հատկապես անվանացանկը, ուր բերված են այս փոքրիկ մատյանում օգտագործված բոլոր տերմիններն ու անունները: Նոր հրատարակության մեջ վերջում տեղ չեն գտել միայն մախկին հրատարակության մեջ առկա արևելաքրիստոնեական արվեստի տարբեր հուշարձանների 16 լուսանկար:

Ինչպես տեսանք բառարանը կազմվել է մեծ խնամքով, թեպետ նոր հրատարակություն են սպրդել որոշ վրիպակներ, ցավոք դրանցից մի քանիսը գալիս են մախկին տպագրությունից: Բերեն միայն մի քանի օրինակ 543 էջից. Հայաստանում քրիստոնեության պաշտոնական ընդունումը և Գրիգոր Լուսավորչի ձեռնադրությունը ժամանակագրական ցանկում պետք է իրենց տեղերը փոխեն, Հայոց գրերի գյուտը ընդունված 405/6-ի փոխարեն, որը ճշտել է պրոֆ. Երվանդ Տեր-Սիմասյանը, թվագրված է «շուրջ 407» թվականով, Շահապիվանի ժողովի թվականը արժեք դնել 444 թ.՝ ըստ Է.Ն. Ակինյանի ճշգրտման, Վրաց եկեղեցու բաժանումը «շուրջ 600»-ի փոխա-

րեն կարելի էր թվագրել հայ պատմագրության մեջ ընդունված 607 թվականով:

Նմանատիպ հսկայածավալ գործում մանրակրկիտ քննության դեպքում կարելի է գտնել նաև այլ մանր թերություններ, որոնք երբեք չեն կարող ստվեր նետել հեղինակային խմբի հսկայածավալ աշխատանքի վրա:

Կուզենայինք շնորհակալություն հայտնել հեղինակների ողջ խմբին և անձամբ հրատարակիչ պրոֆ. Հուրերտ Կառլֆիլդին Քրիստոնյա Արևելքի հոգևոր, մշակութային պատմությունը նոր ամպլուայի մեջ ներկայացնելու համար: Կարծում եմ այս գիրքը լավագույնս կժառայի Քրիստոնյա Արևելքի եկեղեցիներով զբաղվող մասնագետներին, ուսանողներին և հետաքրքրասերներին՝ հագուրդ տալու իրենց հետաքրքող բազմազան հարցերի: